թիւն քո զառաջին 'ի սահմանս Կիւլիկիոյ, և ես դիւրաւ ձգեմ յիս զամենեսին, որք կան արտաքոյ քումդ վիճակի ընդ տէրութեամբ Օսմանցւոց 'ի բովանդակ Հռոմայոստան։ Եւ զի Խաչատուր էր պարզամիտ ոք, 'ի խօսիլն Եղիազարու բազում ինչ հանդերձ խոստմամբք, ետ նմա հաւանութիւն. յայնժամ երկոքին նոքա 'ի միասին ուխտիւք դաշինս եդեալ հաստատեցին 'ի դիպող ժամու 'ի գլուխ տանել զիրսն։

Մեկնեալ անտի Խաչատրոյ գնաց 'ի տեղի իւր, և յետ ժամանակի 'ի Կոստանդինուպօլիս վասն խռովութեան Դաւթի վարդապետի Բերիացւոյ։ Եւ Եղիազար վարդապետ փութացեալ էառ ընդ իւր ոսկի բազում եւ դիմեաց առ ոստս Եպարքոսին, այն ինքն է Քէօպրիւլիւ օղլու Ահմէտ Փաշա, և մատուցեալ նմա զընծայս իւր առատ՝ հաճեցոյց զնա, և էառ հրովարտակ առանձին Կաթուղիկոսութեան, զոր խորհեալն էր 'ի վերայ Հայոց եղելոց ընդ տէրութեամբ Օսմանցւոց. էառ միանգամայն և զՊատրիարքութիւնն Երուսաղէմի։ Էր 'ի բանակի Եպարքոսին մի ոմն յիշխանաւորացն Հայոց, Ապրօ Զէլէպի ասացեալ, զոսա եւս յանկոյց Եղիազար 'ի կամս իւր և արար զնա իւր սրտակից և ձեռընտու։ Եւ խորհուրդ առեալ 'ի նմանէ չ'յայտնել զիրսն այլում առ ժամանակ մի, մեկնեցաւ անտի և դարձ արարեալ գնաց 'ի Բերիա։ Ցղեաց անտի վաղվաղակի թուղթ 'ի Կոստանդինուպօլիս առ Խաչատուր Կաթուղիկոս Սսոյ, յորում գրեալ էր այսպէս. « Հոգեւոր եղբայրդ մեր Խաչատուր Կաթուղիկոս, 'ի հասանիլ գրոյս 'ի ձեռս քո, փոյթ ընդ փոյթ եթէ հնար իցէ, դու ինքնին եկեսցես ընդ սուրհանդակաց առանձին 'ի Բերիա. սպասաւորք և կարասիք քո զկնի ելցեն 'ի ճանապարհ. մի յամեր աղաչեմ, զի ժամ է կատարելոյ զբան մեր, զոր հաստատեցաք 'ի միասին յԵրուսաղէմ։ Ընթերցեալ Խաչատրոյ զայս գիր՝ պատրաստեցաւ յուզի անկանիլ. բայց զգուշացեալ՝ զի մի 'ի գործել նորա զայսպիսի ինչ շտապաւ, ծագեսցի աղմուկ չիոթից եւ ինքն 'ի պատճառս այլոց 'ի բերան անկցի ամենեցուն, կոչեաց 'ի ծածուկ զոմանս յերեւելեացն Հայոց և 'ի զգօնամիտ անձանց, ընդ որս էր եւ Երեմիա Զէլէպի Բեօմիւրճեանց, և խորհուրդ արար ընդ նոսա վասն իրացս այսո-